Պալեան զօրագլուխ նոցին, որք խոստանային չինայել զյետին կաթիլս արեան իւրեանց 'ի փրկութիւն քաղաքին որբոյ։ Սալահատտին եւ վարել զմեքենայս պատերազմին 'ի պարիսպ անդ և սկսաւ հարկանել. մեծաւ աշխատութեամբ բրէին զհիմունս խլել և հանել զմեծամեծ քարինս։ Իսկ ամրականք վտահացեալ 'ի քաջութիւն բազկի իւրեանց՝ հորդեալ զեղան արտաքս երկիցս և երիցս և 'ի բաց վանեալ զբազմութիւնն, աւերեալ խանդարեցին զմեքենայս նոցին, այլ զանգիտեալ 'ի խուժանէն վերստին ամրացան 'ի քաղաքն։ Եւ տեսեալ թէ չիք հնար փրկութեան, գրեաց Պալեան իշխանն [առ Սալահատտին եւ խնդրեաց զհաշտութիւն. բայց նա ոչ առ յանձն, զի զայրացեալ էր ոգի նորա սակս անարգելոյ նոցին զառաջին պատգամաւոր իւր, եւ արար պատասխանի. թէ պատրաստ է սրով առնուլ զքաղաքն, և թէ զոր ինչ արարին Լատինք Իսլամ ժողովրդոց յառման քաղաքին, զնոյն պարտ է և ինձ առնել։ Կրկնեաց Պալեանն զխնդիրն խնայել բնակչաց քաղաքին և մի զայրացուցանել առաւել զյուսաբեկսն 'ի կենաց. զի եթէ ասէ կայ վտանդ մահու առաջի սոցա, չզերծանի և բանակ իւր 'ի մեծէ վնասուէ, ուստ եղեալ են յանձինս չմեռանիլ ուրեք, մինչչեւ սպանեալ զտասն այր յայլազգեաց. և բաց 'ի սոցանէ, հիմնայատակ աւերել զքաղաքն, կործանել զգմբէթն մեծ 'ի վերայ Սախրայ մզկթին, 'ի սուր մաշել զհաղարաւոր գերիս Իսլամաց, եւ յափշտակել զմանկունս և զինչս նոցա։ Ի վերայ այսր պատգամի 'ի խորհուրդ կոչեաց Սալահատտին զմեծամեծս տէրութեան իւրոյ, և զոմանս 'ի զօրագլխաց։

Սահմանեցաւ 'ի խորհրդեան խօսիլ հաշտութիւն այսու պայմանաւ, զի ամենեքեան որք գտանին 'ի քաղաքի անդ, 'ի մեծէ մինչեւ ցփոքունս, տացէ այր իւրաքանչիւր փրկանս անձին իւրոյ ոսկիս 10, կին 5 և մանուկ 2. և անկարողքն մնասցեն գերի. յանձն առին Լատինք զպայմանն, եւ կացին երաշխաւոր Պալեանն, Պատրիարքն և իշխանք տաճարական ասպետաց եւ Պալեանն եւ 30,000 ոսկիս աղքատաց, տալ զփրկանս անձանց իւրեանց։ Իսկ այլք 'ի պատմագրացն այլազգեաց ասեն. թէ Սալահատտին գութ մեծ եցոյց 'ի վերայ պարտեալ քրիստոնէից, եւ